



114. ՍԻՆԱՄ ՀՈՐԹԿՈՒ ՀԵՔԻԱԹ

Գաղացու կով կը ծնի, խորոտիկ հորթիկ մե կը բերե, հորթկու անուն կը դնին Սինամ: Սինամ կը մեծնա, կէղնի հերվենա, դրկեց՛ի աչք դընկնա ի Սինամ: մեկ օր դաշտի մեջ կը բռնե, դխեղճ անստունի լեզվի ծեր կը կտրե, ու էդ բան էդ հմալ գընցնա, տեր բանից խաբար շէղնի:

Սինամ կը մեծնա, կէղնի հորեկալ աջառ, դրկեց կը բռնե դանկաջ, կը քաշե տանե ուր տուն, թե Սինամն ի՛մ մալն է. տեր կը բողոքե, դորժ գընկնա դատարան:

— Դատավոր աֆանդի,— կըսե գրկեց,— ես կը հաստատիմ, օր էդ աջառն իմն է, ընձի նշան կա— իմ աշուու լեզվի ծեր կտրուկ է, մորեն օր էղավ՛ էդ հմալ էր:

Աշուու տեր կը շիվրի մնա: Դատավոր զաջառ կը հասու դրկեցին: Դրկեցն ուրախ-ուրախ կը լծե զՍինամ ուր յեղան հետ, կէրթա արտ վարելու, փաթ մե էրկու օր կէրթա-գիկա, յոտք կը փստա. գընկնա խոփի յառջև, խոփ զսիրա կը ծակե, պառեկից դելնա դուս: Սինամ կառնե դարորն ու զմարդ քաշեքաշ գիկա կանի ուր տիրոջ դուս: Տերն հեովանց կը տեսնա, ուրախութենեն կը ճվա.

— Սինամն էկա՛վ, երեր դարո՛րն:

